

# **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

## **ԱՐՏԱԿԱՐԳ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

### **ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ**

Պետությունը ներքին և արտաքին սպառնալիքի պայմաններում, արտակարգ հասարակական խնդիրների առկայության դեպքերում իրավունք ունի ձեռնարկելու արտակարգ միջոցառումներ: Երկրին սպառնացող վտանգի պայմաններում պետական իշխանությունը պետք է հնարավորություն և իրավագործություն ունենա կիրառելու արտակարգ միջոցառումներ: Խորհրդարանական կառավարման ձև ունեցող հանրապետություններում արտակարգ միջոցառումների, օրինակ՝ հատուկ դրություն մտցնելու իրավունքը սովորաբար պատկանում է կառավարությանը, որն այդ իրավունքն իրականացնում է ինքնուրույն կամ ձևականորեն՝ խորհրդարանի հետ միասին<sup>1</sup>: Ինչպե՞ս էր լուծվել իշխանական այդ լիազորությունների բաշխման հարցը Հայաստանում, որո՞նք էին օրենսդիր և գործադիր մարմինների նման իրավագործությունների արտահայտման ձևերը և եղանակները, ի՞նչ վիճակում էր այդ հարաբերությունների իրավական կարգավորումը: Այս հարաբերությունների իրավական կարգավորումը, արտակարգ լիազորությունների բաշխման հարցը, կիրառման պրակտիկան բավականին խճճված են, և որպեսզի պատկերը ամբողջական երևա, կփորձենք հիմնախնդիրների հետազոտությունը կատարել պետական ողջ կառուցակարգի շրջանակում:

Հայաստանի Հանրապետությունում կիրառված արտակարգ կառավարման ինստիտուտներից էր արտակարգ (կամ) ուժեղացված պահպանության դրությունը<sup>2</sup>: Այն տարածքները, որոնցում հայտարարվում էր ուժեղացված պահպանության դրություն, պետական կարգերի ու հասարակական անվտանգության հաստատման իրավունքներն անցնում էին գեներալ-նահանգապետերին և նրանց հավասարեցված անձանց՝ նահանգապետերին, քաղաքների պետերին: Ուժեղացված դրության մեջ հայտարարված տարածքներում այդ անձինք իրավունք ունեին հրապարակելու «հասարակական կարգերի ու պետական անվտանգության խախտումները» կանխող պարտադիր որոշումներ: Այդ որոշումներով կարող էին նախատեսվել մինչև երեք ամիս կալանք և դրամական տուգանքներ: Ուժե-

<sup>1</sup> Տե՛ս «Конституционное право зарубежных стран», էջ 355:

<sup>2</sup> Այդ ինստիտուտը հիմնադրվել էր 19-րդ դարի վերջերին ռուսական հակաբարեփոխումների ընթացքում և կարգավորվում էր 1881 թ. օգոստոսի 16-ի «Պետական կարգերի ու հասարակական հանգստության պահպանության, կայսրության առանձին տարածքներում ուժեղացված դրություն հայտարարելու» կանոնադրությամբ (տե՛ս **Титов Ю. П.**, նշվ. աշխ., էջ 264):

ղացված դրության համար պատասխանատու անձը կարող էր արգելել ժողովրդական, հասարակական և նույնիսկ մասնավոր ժողովները, ժամանակավորապես կամ մինչև ուժեղացված դրության վերջը փակել բոլոր առևտրական և արդյունաբերական հաստատությունները, արգելել առանձին անձանց մուտքն ուժեղացված պահպանության դրության մեջ գտնվող տարածքներ, վարչական կարգով լուծել կառավարական կամ սեփական պարտադիր որոշումների խախտումների վերաբերյալ գործերը: Գեներալ-նահանգապետը, իսկ այն վայրերում, ուր այդ պաշտոնը չկար, ներքին գործերի նախարարը, կարող էր ընդհանուր քրեական գործերի քննությունը հասարակական կարգի և հանգստի պահպանության նպատակով հանձնել ռազմական դատարանների քննությանը՝ ռազմական ժամանակի օրենքներով «դատելու համար»: Նրանք կարող էին պահանջել գաղտնի նիստերում քննել բոլոր այն դատական գործերը, որոնց հրապարակային քննությունը կարող էր առիթ ծառայել «մտքերի բորբոքման և կարգուկանոնի» խախտման համար:

Ուժեղացված պահպանության դրություն հայտարարելու առաջին փորձը արվել է 1919 թ.: Հունվարի 21-ին ՆԳ նախարարի պաշտոնակատար Ա. Խատիսյանը կառավարությանը զեկուցեց «Դարալագյազի, Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում գոյություն ունեցող անկարգություններին, խմբերի սանձարձակություններին ու ստեղծված անարխիային վերջ տալու համար այդ գավառներում ուժեղացված դրություն հայտարարելու, գեներալ-նահանգապետություն հաստատելու և որոշ ուճիրների համար մահվան պատիժ մտցնելու մասին»: Կառավարությունը, սկզբունքորեն համաձայնելով ՆԳ նախարարի հետ, որոշեց հարցի վերջնական որոշումը հետաձգել հաջորդ օրվա նիստին: Հունվարի 22-ին Ա. Խատիսյանն առաջարկեց վերը նշված նպատակով թվարկված գավառներից ձևավորել մեկ զինվորական շրջան (օկրուգ), նշանակել շրջանի պետ՝ վերջինիս ենթարկելով թե՛ տեղական զորքերը և թե՛ միլիցիան: Զինվորական շրջանի պետը պետք է ենթարկվեր և ՆԳ նախարարին, և իբրև տեղական զորքերի հրամանատար՝ Հայկական դիվիզիայի պետին<sup>3</sup>: Կառավարության որոշումն այդ կապակցությամբ հետևյալն էր. «Համաձայնվելով այս առաջարկին, հանձնարարել ՆԳ նախարարի պաշտոնակատարին իր այդ առաջարկը ձևակերպել մի հատուկ կանոնադրությամբ և Նախարարների խորհրդի միջոցով ներկայացնել Հայաստանի խորհրդի հաստատմանը»: Արդարադատության նախարարի խնդրանքով արձանագրության մեջ հիշատակվել է, որ ինքը դեմ է այդ առաջարկին, իսկ հանրային կրթության նախարարը ձեռնպահ դիրքորոշում է ցուցաբերել: Երկուսն էլ ժողովրդական նախարարներ էին: Այս դեպքերի վերլուծությունից երևում է, որ, այնուհանդերձ, կառավարության համար Հայաստանի խորհուրդը զսպող մեծ դեր էր կատարում, որ կառավարությունն ինքն ինքնուրույն չհամարձակվեց հիմնելու գեներալ-նահանգապետություն կամ հայտարարելու ուժեղացված դրություն: Այդ է վկայում կառավարության մաս 1919 թ. հունվարի 30-ի նիստը, որում քննելով «Երևան քաղաքը, Երևանի, Էջմիածնի,

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 16:

Սուրմալուի, Ղարալագյազի և Շարուրի գավառներում զորեղացված պահպանության դրություն հայտարարելու մասին» ՆԳՆ-ի զեկուցումն ու օրինագիծը, որոշել է «օրինագծին հավանություն տալ և ներկայացնել Հայաստանի խորհրդին ի հաստատություն»<sup>4</sup>: Եզրակացությունն այն է, որ զորեղացված դրության հայտարարումը օրենսդիրը վերապահել էր իրեն, այլ ոչ թե կառավարությանը:

Առաջին հանրապետության պետական կառավարման կառուցակարգում կիրառված արտակարգ իրադրությանը համապատասխանող միջոցառումներից էին նաև **գեներալ-նահանգապետության ինստիտուտի** ներմուծումը և **զինվորական շրջանի** ստեղծումը: Գեներալ-նահանգապետության ինստիտուտները կիրառվել են Ղարսում և Նախիջևանում: 1919 թ. հունիսի 14-ին զինվորական նախարարի զեկուցման հիման վրա գեներալ-մայոր Գր. Շելկովնիկյանը նշանակվել է Նախիջևանի գեներալ-նահանգապետ<sup>5</sup>: Սակայն նույն թվականի հուլիսի 3-ին Նախիջևանի գեներալ-նահանգապետությունը վերացվեց: Նախարարների խորհրդի այդ օրվա նիստի օրագրում կառավարության որոշումը ձևակերպված է հետևյալ կերպ. «Համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի՝ վերացնել Նախիջևանի գեներալ-նահանգապետությունը սույն թվի հուլիսի 10-ից»<sup>6</sup>: Հետևաբար գեներալ-նահանգապետության ինստիտուտի հիմնադրումն օրենսդիրն պատկանող լիազորություն էր:

Կարսում գործել է նաև **զլխավոր պետի ինստիտուտը**: Այդ կապակցությամբ ներքին գործերի նախարարը 1919 թ. օգոստոսի 25-ին հարցումով դիմել է Նախարարների խորհրդին, թե տարածվում է արդյոք Կարսի շրջանի զլխավոր պետի իշխանությունը երկաթուղու վրա: Այդ հարցումին կառավարության տված պատասխան-պարզաբանումի համաձայն՝ Կարսի շրջանի զլխավոր պետի իշխանությունը տարածվում էր նաև երկաթուղու վրա<sup>7</sup>: Գլխավոր պետի ինստիտուտը 19-րդ դ. վերջերի ռուսական հակաբարեփոխումների դրսևորումներից մեկի՝ «տարածքային տեղամասերի պետի» ինստիտուտի<sup>8</sup> տեղայնացված տարբերակն էր: Տարածքային տեղամասերի պետին կարելի է դիտել որպես արտակարգ լիազորություններ ունեցող պաշտոնյայի, որն օժտված էր բավականին լայն իրավասությամբ. իրականացնում էր հսկողություն համայնական գյուղացիական ինքնավարությունների նկատմամբ և հաշտարար ենթակայության գործերի քննություն, օժտված էր ոստիկանական ու վարչական լիազորություններով, ներառյալ մինչև 3 օր վարչական կալանք և տուգանք կիրառելու իրավունքով: Գյուղական և գավառամասային պաշտոնյաների նկատմամբ կարող էր կիրառել դիտողություն, նկատողություն, տուգանք, մինչև 7 օր կալանք, պաշտոնից ժամանակավոր հեռացում: Տարածքային տեղամաս-

<sup>4</sup> Հայաստանի խորհուրդն այդպիսի օրենքը չի ընդունել, որովհետև 1919 թ. փետրվարից խորհրդի գործունեությունը գրեթե ծախողված էր:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 132:

<sup>6</sup> Նույն տեղում, թ. 152:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, 2-րդ մաս, թ. 41:

<sup>8</sup> Այդ ինստիտուտը սահմանվեց 1889 թ. հունիսի 12-ի «Положение о земских участках начальниках» ակտով (տե՛ս **Титов Ю. П.**, նշվ. աշխ., էջ 266-268):

սի՝ գավառի, քաղաքի պետի ինստիտուտը կիրառվել է նույնիսկ Երևանում: Այսպես, զինվորական նախարարի 1919 թ. հունիսի 30-ի՝ ներքին գործերի նախարարի հետ համաձայնեցրած հրամանով Երևան քաղաքի զինվորական կապիտան Շահխաթունին նշանակվել է քաղաքի պետ, որպեսզի ապահովի զինվորական ու վարչական «պահպանությունը» և կարգուկանոնը: Այդ նպատակով քաղաքային միլիցիան, պահակազորային գումարտակը, երկաթուղու պարետը և միլիցիան ենթարկվում էին նրան, իսկ ինքը՝ քաղաքի պետը, երկակի ենթակայություն ուներ<sup>9</sup>: 1920 թ. ապրիլի 14-ին զինվորական նախարարը, հիմք ընդունելով կառավարության որոշումը, Երևան քաղաքի պետ Շահխաթունուն նշանակում է «Երևանի և դրա շրջանի ինքնապաշտպանության պետ»՝ նրան վերապահելով մի շարք արտակարգ իրավունքներ: Երևան քաղաքում գումարտակներ կազմելու կարգադրությունները կատարելու ժամանակ քաղաքային միլիցիան պետք է ենթարկվեր ինքնապաշտպանության պետին: Երևանի և Էջմիածնի գավառների միլիցիան անհապաղ պետք է կատարեր ինքնապաշտպանության պետի բոլոր պահանջները: Ինքնապաշտպանության պետին տեսչային իրավունքներ էին տրվում զորահավաքի ստուգման և ազգաբնակչության տուրքի գործում: Հիշյալ շրջանների վարչական իշխանությունները պարտավոր էին կատարել դասալքության դեմ կռվելու վերաբերյալ ինքնապաշտպանության պետի բոլոր պահանջները: «Ինքնապաշտպանության պետի ցուցումով ՆԳՆ-ն կատարում էր ադմինիստրացիայի այն ներկայացուցիչների տեղափոխություն, որոնք կնկատվեին թուլության, կեղծումների կամ հետապնդման ժամանակ ցույց տված անընդունակության մեջ: Ջորամասեր կազմակերպված շրջաններում ինքնապաշտպանության պետին իրավունք է վերապահվում վարչական կարգով բանտարկել դասալիք պահողներին՝ 3 ամիս ժամկետով և տուգանել 30.000 ռ. սահմանում: ... Ինքնապաշտպանության պետի և վարչական իշխանության ցուցմունքով դասալիքների ընտանիքները զրկվում են հաց ստանալու իրավունքից»<sup>10</sup>:

Այսպիսով, տարածքային պետերի ինստիտուտի կիրառումը Հայաստանում ուներ առանձնահատկություն՝ այդ պաշտոնյան զրկված էր հաշտարար ենթակայության գործերի քննության իրավունքից, օժտված էր ոստիկանական ու վարչական լայն լիազորություններով, կարող էր կիրառել մինչև 3 ամիս վարչական կալանք:

Գործադիր իշխանության արտակարգ լիազորություններից էր **«պարտադիր որոշումների» կայացման իրավունքը**: «Պարտադիր որոշումների» ինստիտուտը հանրապետությունը ժառանգել էր ռուսական իրավական համակարգից: Պարտադիր որոշումներ հրապարակելու իրավունքը սահմանված էր 1881 թ. «Պետական կարգերի ու հասարակական հանգստության պահպանության, առանձին տարածքներում ուժեղացված դրություն հայտարարելու» կանոնադրությամբ: Այդ օրենքը սահմանում էր, որ պարտադիր որոշումները հրապարակվում են այն շրջաններում, ուր

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 64, թ. 403:

<sup>10</sup> «Յառաջ», թերթ, Եր., 1920, 27 ապրիլի, թիվ 85:

հայտարարված է ուժեղացված կամ արտակարգ պահպանության կամ զինվորական դրություն: Պարտադիր որոշման ընդունման իրավունքը պատկանում էր նահանգապետերին, քաղաքապետերին: «Ռուսական հիմնական օրենքների» 124 հոդվածի համաձայն՝ պարտադիր որոշումներ ընդունելու իրավունք ձեռք բերեցին Նախարարների խորհուրդը, նախարարությունների գլխավոր վարչությունների կառավարիչները և այլ պաշտոնյաներ: Այդ որոշումները չէին կարող հակասել գործող օրենքներին, չէին կարող սահմանել նոր հարկեր և տուրքեր, պարհակներ (վերջիններիս կարգավորման աղբյուրը միայն օրենքն էր): Պարտադիր որոշումների ընդունման իրավունքից զրկված էին զինվորական պաշտոնյաները<sup>11</sup>: Այս ինստիտուտը լայնորեն կիրառվում էր հանրապետությունում, հատկապես այն ժամանակամիջոցներում, երբ խորհրդարանները չէին գործում և խորհրդարանական վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ բացակայում էր:

Պարտադիր որոշումները կոչված էին պայքարելու և կանխելու հասարակական կարգի դեմ ուղղված իրավախախտումները: Պարտադիր որոշումները կարող էին սահմանել դրամական տուգանքներ: Սակայն պարտադիր որոշումների առանձնահատկությունն այն էր, որ նույն ռուսական օրենսդրությունից հանրապետությունը ժառանգել էր արտադատական (վարչական) կալանքի ինստիտուտը: Այդպիսով, գործադիր իշխանությունն իր պարտադիր որոշումները երբեմն երաշխավորում էր վարչական կալանքով՝ վկայակոչելով օրենսդրությունը, ըստ որի՝ նա այդ իրավունքն ուներ (ռուսական դատական կանոնադրությունները գործադիր իշխանությանն այդպիսի լիազորություն տալիս էին): «Քրեական դատավարության կանոնադրության» 1-ին հոդվածի ծանոթագրությունը սահմանում էր հետևյալ դրույթը. «Դատական հետապնդում չեն համարվում այն միջոցառումները, որ օրենքով նախատեսված կարգով ձեռնարկում են ոստիկանական և այլ վարչական իշխանությունները՝ հանցագործությունների և զանցանքների կանխման համար»<sup>12</sup>: Այս դրույթը եապես նպաստում էր գործադիր իշխանության ներխուժմանը դատարանների գործունեության ոլորտ՝ հնարավորություն տալով նրանց վարչական կարգով կիրառելու արտաքսում և արքոր: Ժամանակավոր կառավարությունը երկրում անիշխանությունները և անկարգությունները կանխելու նպատակով չվերացրեց վարչական կալանքի ինստիտուտը, բայց 1917 թ. հուլիսի 16-ին ընդունեց «Արտադատական կարգով կալանված անձանց վերաբերյալ գործերի քննության կարգի մասին» որոշումը<sup>13</sup>:

Նույն տրամաբանությամբ և նախադրյալներից ելնելով Օզակոնը (Հատուկ անդրկովկասյան կոմիտեն) 1917 թ. հոկտեմբերի 27-ին ընդունեց որոշում, որով Անդրկովկասի վարչական իշխանություններին իրավունք

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 221, թ. 57:

<sup>12</sup> «Устав уголовного судопроизводства» // Российское законодательство X–XX веков. Том 8. М., 1991.

<sup>13</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 62, թ. 87, ինչպես նաև՝ գ. 49, թ. 24:

տվեց կատարել արտադատական կալանավորում<sup>14</sup>: Ինչպես ցույց են տալիս արխիվային փաստաթղթերը, և՛ կառավարությունը, և՛ նախարարները լայնորեն կիրառում էին «պարտադիր որոշումների» ինստիտուտը և դրանցով նույնիսկ սահմանում էին արտադատական կալանավորում:

Հայաստանի Հանրապետությունում սկզբնապես հաստատվեց դատական համակարգ, որը և՛ իր կառուցվածքի, և՛ իր գործառնության ընդհանրության, և՛ տվյալ ժամանակաշրջանում այլ երկրներում գոյություն ունեցող դատական համակարգերի, և՛ հատկապես դրանից հետո եկող խորհրդային դատական համակարգի համեմատությամբ անվերապահորեն կարելի է համարել առաջադիմական, ժողովրդավարական: Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 6-ի դատարանակազմական և դատավարական օրենքների ուժով արդարադատությունը՝ որպես պետական գործունեության հատուկ տեսակ, առանձնանում էր գործադիր և օրենսդիր մարմիններից: Դատական կանոնադրությունները սահմանում էին, որ «ոչ ոք չի կարող պատժվել դատական գերատեսչությանը ենթակա հանցագործության կամ զանցանքի համար այլ կերպ, քան պատշաճ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով և դատական կանոնադրություններով սահմանված պատշաճ ընթացակարգով»<sup>15</sup>:

«Դատական հաստատությունների կանոնադրության» 1-ին հոդվածի՝ «Դատական իշխանությունը պատկանում է հաշտարար դատավորներին, շրջանային դատարաններին, դատական պալատին և սենատին», դատավարական կանոնադրությունների՝ «պատշաճ դատարաններ», «պատշաճ ընթացակարգ» իրավական ձևակերպումներն ու հասկացությունները վկայում են նաև, որ արտակարգ դատարանների ստեղծումն օրենքով արգելված էր, որ դատավարության իրականացման կարգը օրենսդիր մարմինը չէր կարող կամայականորեն փոփոխել, որ արդարադատությունը Հայաստանում պետք է իրականացնեին միայն օրենքում նշված պատշաճ դատարանները, որոնք հռչակված էին անկախ, իսկ դատավորներն օժտված էին անփոփոխելիության իրավունքով: Սակայն ցարական վարչաձևի օրոք նույնիսկ վարչական հարկադրանքը կիրառվում էր օրենքի հիման վրա, և առանց օրինական հիմքերի վարչական մարմիններն այդպիսի հարկադրանք կիրառելու իրավունք չունեին: Առաջին հանրապետությունում «արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները» սկզբունքը խեղաթյուրվեց այն բանի հետևանքով, որ արտա-

<sup>14</sup> Նկատի ունենալով Անդրկովկասում ծավալվող անիշխանությունը, Օգակոմը որոշեց. ա) նահանգային (մարզային) կոմիսարներին իրավունք տալ կատարելու վարչական (արտադատական) կալանք՝ երեք ամսից ոչ ավելի ժամկետով: Յուրաքանչյուր կալանավորման փաստի վերաբերյալ կոմիսարն անհապաղ պետք է հաղորդեր Օգակոմին: Երեք ամսից ավելի ժամկետով կալանքը կարող էր կիրառվել միայն Օգակոմի թույլտվությամբ. բ) գավառային (շրջանային) կոմիսարներն իրավունք ունեին կիրառելու վարչական կալանք՝ մեկ ամսից ոչ ավելի ժամկետով և պարտավոր էին ամեն մի դեպքի մասին 24 ժամվա ընթացքում հաղորդելու նահանգային (մարզային) կոմիսարներին: Նահանգային և մարզային կոմիսարներն իրավունք ունեին վերացնելու ստորադաս կոմիսարների որոշումները վարչական կալանք կիրառելու վերաբերյալ (տե՛ս ԶԳ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 62, թ. 85, ինչպես նաև գ. 49, թ. 25):

<sup>15</sup> «Устав уголовного судопроизводства». հոդվ. 1, 14, «Устав гражданского судопроизводства», հոդվ. 1, 2, 3, 415 // Российское законодательство X–XX веков». Том 8. М., 1991.

կարգ լիազորություններով օժտված գործադիր զանազան մարմիններ իրենց արտակարգ իրավազորություններով դատ ու դատաստան էին իրականացնում հանրապետության ամբողջ տարածքում: Հաճախ այդ մարմինները գործում էին իրավական հիմք ունենալով ոչ թե օրենքները, այլ, այսպես կոչված, «իշխանությունների պարտադիր որոշումները», այսինքն՝ պետական կառավարման կենտրոնական գործադիր մարմինների կողմից ընդունված նորմատիվ-իրավական ակտերը<sup>16</sup>: Իրավական տեսակետից այդ որոշումները «չպետք է հակասեին գործող օրենքներին»<sup>17</sup>: Բայց իրականում այդ կանոնը չէր պահպանվում:

Առաջին հանրապետությունում ամենատարածվածն արտակարգ լիազորություններով կոմիսարների ինստիտուտն էր: 1918-1919 թթ. ընթացքում արտակարգ կոմիսարների ինստիտուտը կիրառվել է մի քանի անգամ, մասնավորապես՝ դասալքության դեմ պայքարի կոմիսարը, Երևան քաղաքի պետի պաշտոնը, «զինահավաքի հատուկ կոմիսարը», որի պաշտոնը հիմնադրեց օրենսդիր լիազորություններով օժտված կառավարությունը՝ 1919 թ. ամռանը:

Բնակչությունից զենքը հավաքելու և պետականացնելու հիմնախնդրով զբաղվել է նաև Հայաստանի խորհուրդը: Նրա ընդունած առաջին օրենքներից մեկը «Մասնավոր սեփականություն կազմող զենքերի և զինամթերքների պետականացման մասին» օրենքն էր (1918 թ. սեպտեմբերի 10-ին)<sup>18</sup>, որով սահմանվում էր. «ՀՀ սահմաններում մասնավոր սեփականություն կազմող ամեն տեսակի զենքերն ու զինամթերքը, բացի որսորդական անմագազինավոր և պաղ տեսակից, գրավում և հանձնվում են զինվորական վարչությանը, մինչև որ օրենքով կսահմանվի զենք ունենալու և կրելու կարգը»<sup>19</sup>: ՆԳ նախարարի որոշած և հայտարարած ժամանակամիջոցում կամովի չհանձնված զենքերն ու զինամթերքը վարչական կարգով բռնագրավվում էին, իսկ պարտազանց զինատերերը ենթարկվում էին պատժի՝ մինչև երեք ամիս բանտարկության և կամ տուգանքի՝ ՆԳ նախարարի որոշումով: Վերջինիս որոշմամբ վտանգավոր տարածքում գտնվող գյուղերում առգրավված զենքի և զինամթերքի մի մասը, կախված վտանգի մեծությունից, մնում էր նույն գյուղում՝ հանրային պաշտոնյայի հսկողության տակ՝ գյուղի պաշտպանության համար համայնքի կողմից կազմակերպված պահապանների համար: Առանձին դեպքերում մասնավոր անձերին և հիմնարկություններին զենք և զինամթերք ձեռք բերելը և կրելը

<sup>16</sup> Հաշտարար դատարանները հեղեղված էին, այսպես կոչված, լիազորական գործերով, այսինքն՝ գանգատներով՝ ընդդեմ կառավարական և տեղական կոմիսարների, միլիցիապետերի և այլոց:

<sup>17</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 221, ք. 57:

<sup>18</sup> Տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1918, հոդվ. 6, էջ 2-4:

<sup>19</sup> 1919 թ. հունվարի 13-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց օրենք «Ձեռքերը գրավելու մասին», որով, լրացնելով 1918 թ. սեպտեմբերի 10-ի օրենքը, իշխանություններին իրավունք էր տրվում «յարջունիս գրավել» թրերն ու բերուբները, ինչպես նաև Մոսինի, Լեբելի հրացանների սվինները: Բացառություն էր արված միայն սպաների, զինվորական բժիշկների թրերի համար, եթե նրանք կներկայացնեին հավաստագիր այն մասին, որ իրենք եղել են զինվորական ծառայության մեջ սպայական կամ դասական աստիճանով (տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1919», հոդվ. 73, էջ 42):

թույլատրում էր ՆԳ նախարարը՝ հատուկ վկայագրերով: Մինչև 1918 թ. օգոստոսի 29-ը տրված զենք կրելու իրավունքի վկայականները կորցնում էին իրենց ուժը:

1919 թ. հուլիսի 24-ին Նախարարների խորհուրդը ՆԳ նախարարի զեկուցման հիման վրա ընդունել է օրենք «Ազգաբնակչությունից զենք և զինամթերք հարկադրական միջոցներով հավաքելու և զինային պարտադիր տուրք սահմանելու մասին»<sup>20</sup>: Հուլիսի 29-ին Նախարարների խորհուրդը հաստատել է «Զինաժողովի վերաբերյալ կանոնների մասին» օրենքը<sup>21</sup>: Առաջին օրենքը սահմանում էր, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր էր մինչև 1919 թ. հուլիսի 27-ի ժամը 14. 00-ն բերել և հանձնել իր մոտ եղած հրացանները և փամփուշտները, որոնց համար նա ստանալու էր օրենքով սահմանված դրամական հատուցում: Բոլոր այն քաղաքացիները, ովքեր այդ ժամկետում չէին հանձնելու հրացան կամ փամփուշտ, պարտավոր էին 1919 թ. հուլիսի 27-ից մինչև օգոստոսի 5-ը վճարել զինամթերքի տուրք, որի չափը որոշելու էր հատուկ կոմիսարը: Մայրաքաղաքում այդ գործառույթներն իրականացնելու համար հիմնադրվում է հատուկ կոմիսարի պաշտոն՝ արտակարգ լիազորություններով, որին հանձնարարվում է «ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ զենքն ու փամփուշտները հարկադրական և պատժական եղանակով հավաքելու և գրավելու համար»<sup>22</sup>: Կոմիսարին իրավունք էր տրվում ենթարկել բանտարկության այս կարգադրությունները չկատարողին մինչև 6 ամիս, կամ տուգանքի՝ մինչև 10000 ռ.: 1919 թ. հուլիսի 29-ին ընդունված երկրորդ օրենքը զինաժողովի հատուկ կոմիսարի գործունեությունն այլ վայրերի վրա տարածելու իրավունքը վերապահում էր Նախարարների խորհրդին: Միաժամանակ այդ կանոնները հատուկ կոմիսարին իրավունք էին տալիս գործելու Նոր Բայազետ և Ալեքսանդրապոլ քաղաքներում<sup>23</sup>:

Հատուկ կոմիսարին իրավունք էր վերապահվում յուրաքանչյուր վայրում ինքնուրույն որոշելու զենքերը կամավորապես կառավարությանը հանձնելու ժամանակամիջոցը, ձևը և դրամական (կամ այլուրով) հատուցման պայմանները: Նա կարող էր գավառներ ուղարկել զինաժողովի կոմիսարների՝ նրանց փոխանցելով իր լիազորությունները: Այս կոմիսարներին նշանակում էր վարչապետը՝ հատուկ կոմիսարի առաջարկությամբ: Հատուկ կոմիսարն իրավունք ուներ բռնագրավելու և գավառի վարչության միջոցով վաճառքի հանելու այն անձանց գույքը, ովքեր չէին ուզում վճարել զինամթերքի տուրքը կամ օրինական պայմաններում որոշված դրամական տուգանքը: 1919 թ. հուլիսի 24-ի և 29-ի զինաժողովի մասին օ-

<sup>20</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 20: Օրենքի մեկ այլ անվանումն էր՝ «Օրենք զինահավաքի մասին», և դրա տեքստը կա ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 78, թ. 22-ում:

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 26: Կանոնների տեքստը տե՛ս գ. 78, թ. 30-ում:

<sup>22</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 78, թ. 22:

<sup>23</sup> Սահմանելով, որ այդ երկու օրենքները գործում են մինչև 1919 թ. օգոստոսի 31-ը, «կանոնները» հատուկ կոմիսարին իրավունք էին տալիս զինաժողով կատարելու նաև այլ վայրերում՝ Վաղարշապատում, Աշտարակի, Ապարանի, Դիլիջանի, Ախտալի շրջաններում, Ալեքսանդրապոլի և Մեծ Ղարաքիլիսայի գավառներում (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 28, թ. 30):

րենքների գործողության ժամկետը մինչև օգոստոսի 31-ն էր: Հետագայում պառլամենտը 1919 թ. հոկտեմբերի 3-ին ընդունել է օրենք «Հուլիսի 29-ի զինաժողովի օրենքի գործադրության ժամանակամիջոցը մի ամսով երկարացնելու մասին», որով երկարաձգվում էր նշված օրենքի գործադրության և հատուկ կոմիսարի լիազորությունների ժամանակամիջոցը՝ սեպտեմբերի 1-ից մինչև 30-ը: Ստացվում է, որ կոմիսարը սեպտեմբերին գործել էր, ինչի իրավունքը չուներ: Պառլամենտը հետին թվով «օրինականացնում» էր կոմիսարի ապօրինի գործունեությունը<sup>24</sup>:

Արտակարգ կառավարման ձևերի ու ինստիտուտների մեծագույն մասը կիրառվել է 1920 թ. մայիսյան ապստամբության ընթացքում և դրանից հետո: Այսպես, 1920 թ. մայիսի 5-ին օրենսդրական լիազորություններով օժտված կառավարությունը սպեկուլյացիայի դեմ միջոցներ ձեռք առնելու ծրագրի շրջանակներում ՆԳ նախարարին իրավունք վերապահեց նշանակելու «սպեկուլյացիայի դեմ կռվելու» կոմիսարներ Երևանում, Ղարսում և Ալեքսանդրապոլում<sup>25</sup>: Նույն օրը կառավարությունը որոշեց բոլոր «պետական հաստատությունների համար նշանակել լիազոր կոմիսարներ», իսկ հաղորդակցության նախարարին իրավունք տրվեց իր կողմից նշանակել հատուկ կոմիսարներ<sup>26</sup>: Մայիսի 5-ին հիմնադրվեցին նահանգային կոմիսարությունները Երևանի, Շիրակի և Գորիսի նահանգների համար<sup>27</sup>: 1920 թ. գարնանից գործել է Դարալագյազի արտակարգ կոմիսարը<sup>28</sup>: 1920 թ. սեպտեմբերի 8-ին Նախարարների խորհրդի որոշման հիման վրա հաղորդակցության նախարարին իրավունք վերապահվեց երկաթուղին վերահսկելու համար նշանակել երեք կոմիսար<sup>29</sup>:

Այսպիսով, արտակարգ միջոցառումներից մեկն էլ արտակարգ լիազորություններով օժտված կամ հատուկ կոմիսարների ինստիտուտն էր, որ հատկապես մեծ թափով կիրառվում էր «բյուրո կառավարության» գործունեության շրջանում: Արտակարգ կամ հատուկ լիազորություններով օժտված կոմիսարները պաշտոնատար անձինք էին, որոնք նշանակվում էին որոշակի ոլորտներում հսկողական, գործադիր կարգադրիչ գործառնություններ իրականացնելու համար, եթե տվյալ ոլորտում ստեղծված էր արտակարգ իրավիճակ, կամ կառավարությունը սովորական կերպով ու «պատշաճ» կարգով գործող պետական կառավարման համակարգի միջոցով չէր կարողանում լուծել պետական կառավարման խնդիրները:

Արտակարգ օրենսդրության սահմանման հաջորդ դրսևորումն էր **ապրանքների և մթերքների ազատ շրջանառության սահմանափակումը**:

<sup>24</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու», հրատ. Պառլամենտի, Եր., 1919, նոյ. 14, թիվ 3, հոդվ. 28, էջ 22:

<sup>25</sup> Կառավարության նիստում զեկուցողին հանձնարարվեց 48 ժամվա ընթացքում մշակել և ներկայացնել այդ մասին օրինագիծ (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 77):

<sup>26</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 77:

<sup>27</sup> Համապատասխանաբար նահանգային կոմիսարներ նշանակվեցին Ս. Թորոսյանը, Կ. Սասունին, Ս. Սանասյանը (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 71):

<sup>28</sup> Դարալագյազի քաղաքական գործերով հատուկ կոմիսար Գ. Բալայանը նշանակվել էր 1920 թ. մայիսի 12-ին (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 83):

<sup>29</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 2-րդ մաս, թ. 201:

Այս ոլորտում իրենց «ներդրումն» ունեն ն' օրենսդիր լիազորություններով օժտված կառավարությունը, և՛ երկու խորհրդարանները: Այդ քայլին դիմելու շարժառիթներն էին կամ հանրապետության տնտեսական վիճակը, կամ բնակչության սպառողական կարիքների բավարարման համար կենսական նշանակություն ունեցող մթերքների շրջանառության կարգավորումը: 1918 թ. սեպտեմբերի 11-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց օրենք «Բամբակի մենավաճառի մասին»<sup>30</sup>: Համաձայն այդ օրենքի, որին տարօրինակ կերպով տրվեց հետադարձ ուժ՝ այն գործում էր 1918 թ. հունիսի 20-ից սկսած, ՀՀ տարածքում բամբակի առևտուրը հայտարարվում էր պետության մենաշնորհ: Բամբակի հաստատուն գները պետք է սահմանվեին առանձին օրենքով: Օրենքը բամբակի մենաշնորհը խախտողներին պատասխանատվության ենթարկելու համար սահմանում էր դրամական տուգանքներ կամ բանտարկություն 3-6 ամիս ժամկետով՝ ըստ կատարած խախտման ծանրության<sup>31</sup>: Բամբակի պետական մենաշնորհը գործեց մինչև 1920 թ. մարտի 22-ը, երբ Հայաստանի պառլամենտը կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ սահմանեց, որ բամբակի մենաշնորհի օրենքի գործողությունը չի տարածվում 1920 թ. բամբակի բերքի վրա, այսինքն՝ կասեցրեց մենաշնորհի գործողությունը<sup>32</sup>: Սակայն օրենսդրական լիազորություններով օժտված «բյուրո կառավարությունը» վերականգնեց այդ մենաշնորհը:

Ապրանքների ազատ շրջանառության սահմանափակման կիրառման մյուս դեպքերը պայմանավորված էին սննդամթերքի սպառողական գների կարգավորմամբ կամ պետական գնումների ապահովմամբ: Առաջին այդպիսի օրենքն ընդունվեց 1918 թ. հոկտեմբերի 1-ին՝ «Գետնախնձորի կառավարչական գնման մասին»: Այդ օրենքով արգելվեց կարտոֆիլի արտահանումը ՀՀ սահմաններից, միաժամանակ պարենավորման մարմիններին հանձնարարվեց օրենքով սահմանված գներով կազմակերպել կարտոֆիլի պետական գնումներ՝ կես միլիոն փութ: Կարտոֆիլի գնման շրջանում առանց ներքին գործերի նախարարության պարենավորման բաժանմունքի հատուկ թույլտվության արգելվում էր դրա առևտուրը և արտահանումն այն շրջաններից, որտեղ գնումներ էին կատարվում: Գնված կարտոֆիլն իրացվում էր տեղական ինքնավարություններին, կոոպերատիվներին և հասարակական հիմնարկություններին՝ ազգաբնակչությանը վաճառելու համար: Կարտոֆիլի պետական գնումներն

<sup>30</sup> Տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1918, հոդվ. 8, էջ 4-5:

<sup>31</sup> 1918 թ. դեկ. 3-ին խորհրդարանն ընդունեց օրենք «Սենավաճառի ենթարկված բամբակի գների մասին» (տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1918, հոդվ. 45, էջ 25-26), որով որոշվեց բամբակի պետական մատակարարման գինը: Հայաստանի խորհուրդը 1919 թ. փետ. 7-ին ընդունեց «Լրացուցիչ օրենք բամբակի մենավաճառի մասին», որով գնված բամբակի տնօրինման գործը հանձնվեց ֆինանսների նախարարությանը (տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1919, հոդվ. 85, էջ 51-52): Պառլամենտի 1919 թ. նոյեմբերի 25-ի օրենքը սահմանեց, որ ֆինանսների նախարարն իրավունք ունի թաքցրած բամբակը հայտնաբերողներին վարձատրել հայտնաբերված բամբակի գնի 2/3-ի չափով (տե՛ս «Հայաստանի Հանրապետութիւն, Օրենքների հաւաքածու», հրատ. Պարլամենտի, Եր., 1919, դեկ. 5, թիվ 6, հոդվ. 65, էջ 45-46):

<sup>32</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետութիւն, Օրենքների հաւաքածու», հրատ. Պարլամենտի, Եր., 1920, ապր. 5, Եր., թիվ 5, հոդվ. 45, էջ 37:

ավարտելուց հետո պետք է հայտարարվեր դրա ազատ առևտուր<sup>33</sup>:

Սննդամթերքի շրջանառության և գների կարգավորմանն էր ուղղված «Չաց և միս ծախելու գործը կանոնավորելու մասին» 1919 թ. դեկտեմբերի 24-ի օրենքը, որը հացի և մսի վաճառքի խանութ կամ հացի փուռ բացելու հատուկ կարգ էր սահմանում և պարտավորեցնում էր այդ գործունեությանը զբաղվող ձեռնարկատերերին վաճառքն իրականացնել սահմանված սակագներին համապատասխան<sup>34</sup>:

Պարլամենտի «Ղարսի շրջանի փայտեղենի մասին» օրենքով (1920 թ. հունվարի 10) Կարսի շրջանում անտառահատված ամեն տեսակի փայտեղենը հայտարարվում էր պետական սեփականություն՝ առանց որևէ հատուցման<sup>35</sup>: Մասնավոր սեփականություն համարվող գույքի պետականացման ամենամեծ քայլը Շուստովի գործարանի Երևանի բաժանմունքը՝ իր ողջ շարժական և անշարժ գույքով պետականացնելն էր՝ այդ մասին ընդունված օրենքով<sup>36</sup>:

Ապրանքների ազատ շրջանառության արգելքներ սահմանվեցին նաև 1920 թ. երկրորդ կեսին: Այսպես, արգելված էր Չայաստանից արտահանել «իրավաբանական գրքեր»<sup>37</sup>, արջառներ և այլն<sup>38</sup>: Այդ տեսանկյունից յուրահատուկ էր նաև աղի՝ որպես ապրանքի շրջանառությունը: Դրա՝ Չայաստանից արտահանելու իրավունքը տրվում էր միայն ֆինանսների նախարարությանը, իսկ ներքին շուկայում աղի շրջանառությունն ազատ էր<sup>39</sup>:

Ապրանքաշրջանառությունը կարգավորող հանրապետական ակտերի մեջ հանդիպում են նաև ազատ շրջանառության արգելքները կամ սահմանափակումները վերացնող ակտեր, մասնավորապես՝ կառավարությունն իր 1918 թ. սեպտեմբերի 24-ի որոշմամբ վերացրեց ոգելից խմիչքների ազատ վաճառքի արգելման մինչ այդ ընդունված բոլոր որոշումները և թույլատրեց դրանց՝ ըստ սահմանված կարգի ազատ առևտուրը<sup>40</sup>:

Առաջին հանրապետության առջև ծառայած հարցերից էր բնակարանային խնդիրը, որը պայմանավորված էր պետական և հասարակական հիմնարկությունների հիմնադրմամբ այն վայրերում, որտեղ դրանք չկային, ինչպես նաև դրանց ծառայողներին, բնակավայրերում տեղակայված

<sup>33</sup> Տե՛ս «Չայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1918, հոդվ. 18, էջ 11-12:

<sup>34</sup> Խախտումներն արձանագրում էին տեղական ինքնավարությունները և իրավախախտները՝ տուգանվում: Որպես երաշխիք օրենքը պարտադրում էր այդ գործունեությանը զբաղվող ձեռնարկատերերին մուծել գրավական: Օրենքը գործադրելու իրավազորությունը հանձնված էր քաղաքային վարչություններին, իսկ դրանց որոշումները կարող էին բողոքարկվել քաղաքային խորհուրդներին, որոնց որոշումները վերջնական էին (տե՛ս «Չայաստանի Հանրապետություն, Օրենքների հաւաքածու», հրատ. Պարլամենտի, Եր., 1919, դեկ. 25, թիվ 9, հոդվ. 95, էջ 10):

<sup>35</sup> Տե՛ս «Չայաստանի Հանրապետություն, Օրենքների հաւաքածու», հրատ. Պարլամենտի, Եր., 1920, հունվ. 11, թիվ 2, հոդվ. 17, էջ 13:

<sup>36</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 2, գ. 118, 2-րդ մաս, թ. 269:

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 149:

<sup>38</sup> Տե՛ս նույն տեղը, 1-ին մաս, թ. 98:

<sup>39</sup> Տե՛ս նույն տեղը, 1-ին մաս, թ. 123:

<sup>40</sup> Տե՛ս ՆԽ-ի 1918 թ. սեպ. 24-ի նիստի թիվ 43 օրագիրը («Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, Եր., ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 207):

զորամասերի զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բնակարաններով ապահովելու անհրաժեշտությամբ: Այս խնդիրը ևս լուծվում էր արտակազ օրենսդրության հիման վրա: Այդ ինստիտուտն այն ժամանակվա իրավական եզրութաբանությամբ կոչվում էր «բնակարանների և կացարանների գրավում», երբեմն նաև բռնագրավում, բայց ոչ արդի իմաստով, այլ ընդամենը ռեկվիզիցիայի: Խնդրի էությունն այն էր, որ մասնավոր անձանցից վերցվում էր բնակարանը, իհարկե, դրա ազատ լինելու դեպքում, և վարձով էր տրվում պետական ծառայողներին ու օրենքով սահմանված այլ անձանց<sup>41</sup>:

Բերված նյութը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ապրանքների և հումքի ազատ շրջանառության արգելքը կամ սահմանափակումը զուտ օրենսդրին պատկանող լիազորություն էր և կարող էր սահմանվել միայն օրենքով: Նույնիսկ այն ժամանակահատվածներում, երբ այդպիսի սահմանափակումներ կամ արգելքներ սահմանել է կառավարությունը, դա արվել է օրենքի ձև ունեցող ակտերով՝ խորհրդարանի տված լիազորությունների հիման վրա: Դրան հակառակ՝ ապրանքների և մթերքների ազատ շրջանառության սահմանափակումները կամ արգելքները կարող էին վերացվել նաև կառավարության ակտերով՝ որոշումներով:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը, մարդասիրական դիրքորոշումներից դրդված, օրենսդրական կարգով վերացրել էր **մահապատիժը**: Դրա ուժով Հայաստանի Հանրապետության հռչակման պահին մահապատիժը, որպես պատժատեսակ, օրենսդրորեն սահմանված չէր: Սակայն, ինչպես երևում է արխիվային սկզբնաղբյուրների ուսումնասիրությունից, իրականում և՛ մինչև հանրապետության հռչակումը, և՛ դրա գոյության առաջին ամիսներին, այն կիրառվում էր հանրապետության տարածքում: 1918 թ. ձմռանը և գարնանն Անդրկովկասում իշխում էին անարխիան, թալանը, անկարգութ-

<sup>41</sup> Առաջինն այդ հարցի կարգավորմանը դիմել է «օրենսդիր կառավարությունը», որը 1919 թ. հուլ. 3-ին ընդունեց երկու օրենք՝ «Պաշտոնական անձանց և պետական հիմնարկությունների համար Հայաստանի Հանրապետության քաղաքներում բնակարաններ և կացարաններ բռնագրավելու կանոնների և բռնագրավային հանձնաժողովներ կազմելու մասին», «Օրենք բնակարանների և այլ շինությունների սահմանային գների մասին» (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 152): Կառավարությունը 1919 թ. հուլ. 17-ի օրենքով սահմանեց, որ տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրենց կարիքների համար բռնագրավել առևտրական շենքերը (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 17): 1919 թ. հոկտ. 3-ին պառլամենտն ընդունեց հատուկ օրենք՝ «Երևան քաղաքի բնակարանների գրավման մասին», իսկ 1920 թ. խորհրդարանը կատարելով կողիֆիկացիա, մարտի 19-ին ընդունեց «Պետական և հասարակական հիմնարկությունների, նրանց պաշտոնյաների և օտար պետությունների ներկայացուցիչների համար քաղաքներում բնակարաններ և շենքեր բռնագրավելու կանոնների մասին» օրենքը (տե՛ս «Հայաստանի Հանրապետութիւն, Օրենքների հաւաքածո», հրատ. Պարլամենտի, Եր., 1919, նոյ. 14, թիվ 3, հոդվ. 25-27, էջ 18-21, 1920, հունվ. 11, թիվ 2, հոդվ. 18, էջ 13-14, 1920, ապր. 5, թիվ 5, հոդվ. 42-43, էջ 33-36): Բնակարանային հարցերի կարգավորմանը դիմել է նաև «բյուրո կառավարությունը», որը 1920 թ. օգոս. 13-ին ընդունել է օրենք՝ «Պետական և հասարակական հիմնարկությունների և նրանց պաշտոնյաների և օտար պետության ներկայացուցիչներին քաղաքներում բնակարաններ և այլն տրամադրելու մասին» (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 2-րդ մաս, թ. 184):

յունները, աճում էր հանցավորությունը: Այդպիսի ծանր իրավիճակում դատական համակարգը մատնված էր լիակատար անգործության, որովհետև հարմարեցված չէր նման արտակարգ պայմաններում գործելուն: Պահի հրամայականը կյանքի կոչեց հեղափոխական տրիբունալները, որոնց հիմնական խնդիրն էր երկրամասում արագությամբ իրականացնել արդարադատությունը, հաստատել կարգուկանոն, վերացնել անիշխանությունը: Դրանցից առաջինը Թիֆլիսի տրիբունալն էր, որը հիմնադրել էր Անդրկովկասյան կոմիսարիատը 1918 թ. փետրվարի 3-ին<sup>42</sup>: Հայաստանի տարածքում ևս ստեղծվել է երեք այդպիսի տրիբունալ, որոնցից մեկը գործել է Երևանում 1918 թ. փետրվարի 21-ից, երկրորդը՝ Էջմիածնում 1918 թ. մարտից<sup>43</sup>: Երրորդը Դիլիջանի սահմանապահ ջոկատի պետ, գնդապետ Բաղդասարովի 1918 թ. հունիսի 4-ի հրամանով ստեղծված «ռազմական-շրջանային տրիբունալն» էր<sup>44</sup>: Համեմատելով Թիֆլիսի հեղափոխական տրիբունալի և Դիլիջանի ռազմական շրջանի տրիբունալի կանոնադրությունները, կարող ենք նշել, որ վերջինս պարունակում էր աղաղակող շեղումներ գործող օրենքներից, որոնցից մեկն էլ մահապատժի սահմանումն էր: Ռազմական շրջանի պետի հրամանով հաստատված կանոնադրությունը, շեղվելով օրենքից, և, ի տարբերություն Թիֆլիսի տրիբունալի օրինակելի կանոնադրության, փաստորեն փոխում էր նաև քրեական պատժատեսակների գործող համակարգը կամ խստացնում դրանք: Այսպես, բոլոր տեսակի դիտավորյալ սպանությունները, սպանության փորձերը, դիտավորյալ հրկիզումները, թալանը, «աղջկա բռնաբարությունը», ամուսնացած կանանց աներեսաբար կաշեւը, հետապնդելը, հայրենիքին դավաճանելը, ռազմական գույքի կողոպուտը պատժվում էին մահապատժով: Ըստ կանոնադրության՝ մահապատժ էր նախատեսվում նաև այն բոլոր հանցագործությունների համար, որոնք մինչ այդ, համաձայն օրենքի, պատժվում էին երկարատև տաժանակիր աշխատանքներով: Եթե սրան ավելացնենք, որ տրիբունալում բացակայում էին արդարադատության համար անհրաժեշտ դատավարական երաշխիքները, ապա կստացվի, որ տրիբունալները կամայականության և ապօրինությունների աղբյուր էին: Այսպիսով, տրիբունալն ապօրինաբար, առանց օրենսդրական հաստատման, հիմք ընդունելով միայն իր կանոնադրությունը, իսկ երբեմն էլ՝ չհիմնավորված, կիրառում էր մահապատժ: Օրինակ, տրիբունալների վերացումից հետո արդարադատության նախարարության կողմից խորհրդարանին ներկայացված ներման միջնորդություններից մեկում ասվում է. «Քարվանսարայի ռազմահեղափոխական տրիբունալը 1918 թ. հունիսի 28-ին Ջարխեչ գյուղի բնակիչ Սողոմոնովին, մեղադրելով ոչ մեծ քանակով ալյուրի և շաքարի գողության համար, դատապարտել է մահապատժի գնդակահարության միջոցով, և դատավճիռն ի կատար է ածվել անմիջապես: Այդ գողությունը կատարվել է դատապարտյալի ընտանիքի ծայրահեղ սովի հետևանքով:

<sup>42</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 4, թ. 6:

<sup>43</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 5, 9:

<sup>44</sup> Արխիվային ֆոնդերի նյութերում պահպանվել է միայն այս ռազմահեղափոխական տրիբունալի կանոնադրությունը (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 4, թ. 19):

Նրա մահից հետո ընտանիքի մյուս անդամները՝ կինը, երեխաները և ծեր ծնողները մնացել են առանց կերակրողի: Դա քիչ է, տրիբունալը դատավճռի հիմնավորման մեջ դատապարտյալի վիճակը ծանրացնելու համար մտցրել է կեղծ հանգամանք այն մասին, որ գողությունն իբրև թե կատարված է գորքերի կարիքները սպասարկող պահեստից: Իրականում պահեստը բարեգործական ընկերությանն էր և սպասարկում էր բացառապես որբանոցներին»<sup>45</sup>:

Ռազմահեղափոխական տրիբունալներից առաջին երկուսը վերացվեցին ՀՀ կառավարության Թիֆլիսից Երևան տեղափոխվելուց հետո, իսկ երրորդը լուծարվեց ՀՀ պետական իշխանության ու կառավարության մարմինների ձևավորումից հետո՝ 1918 թ. օգոստոսի 22-ին՝ Նախարարների խորհրդի որոշմամբ<sup>46</sup>:

Հանրապետության կենտրոնական նորաստեղծ մարմինները կազմավորվելուց հետո հավատարիմ մնացին ժամանակավոր կառավարության ձեռնարկած մարդասիրական քայլին՝ օրենսդրական կարգով չմտցնելով մահապատիժը, ինչպես նաև քայլեր ձեռնարկեցին դրա ապօրինի կիրառման դեմ: Սակայն հետագայում իշխանությունները որոշ քրեաիրավական արարքների համար սահմանեցին մահապատիժ՝ նպատակ ունենալով այդ միջոցառման օգնությամբ պայքարելու ահռելի ծավալում ստացած հանցավորության դեմ, արմատախիլ անելու հանրության համար առավել վտանգավորություն ներկայացնող քրեաիրավական արարքները, հանրապետությունում հաստատելու օրինականություն և իրավակարգ: Այդպիսի առաջին քայլն արվեց Առաջին հանրապետության հռչակումից մեկ տարի անց: 1919 թ. հունիսի 25-ին ՆԳՆ-ի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով Նախարարների խորհուրդ մտցված «Դասալքության դեմ կռվելու վերաբերյալ» օրինագծով առաջարկվում էր մահապատիժ սահմանել դասալքության համար<sup>47</sup>: Արդարադատության նախարարությունը դեմ արտահայտվեց դրան: Օրինագիծն ընդունվեց, սակայն մահապատիժը՝ ոչ: Բայց ուղիղ մեկ ամիս հետո՝ հուլիսի 24-ին, ռազմական նախարարը հանդես եկավ նոր օրենսդրական նախաձեռնությամբ՝ առաջարկելով Նախարարների խորհրդին քննարկել «Մահվան պատիժ մտցնելու» օրինագիծը: Այս անգամ Նախարարների խորհուրդը, քննարկելով նախագիծը, 1919 թ. հուլիսի 24-ին ընդունեց «Օրենք մահվան պատժի մասին», որում ասվում էր. «Որպես պատժի ամենաբարձր աստիճան մտցնել մահվան պատիժ գնդակահարումով, բացի օրենքի համապատասխան հոդվածներում մատնանշված պատիժներից, այն անձանց համար, որոնք հետևյալ ծանր հանցանքներից մեկի մեջ կրեմվն»<sup>48</sup>: Օրենսգրքում թվարկված այդ հանրորեն վտանգավոր արարքներն իրենց բնույթով հիմնականում պետական և զինվորական հանցագործություններն էին: Դրանք էին՝ պետական դավաճանությունը, գոյություն ունեցող իշխանության դեմ ակնհայտ ապստամբու-

<sup>45</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 404, ց. 1, գ. 71, թ. 1:

<sup>46</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 19:

<sup>47</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 108:

<sup>48</sup> Նույն տեղում, թ. 126:

յունը, հեռագրաթելի կամ երկաթուղու դիտավորյալ ոչնչացումը, պատերազմի դաշտից թշնամու մոտ փախչելը, կռվի վայրն ինքնագլուխ թողնելը, կռվին մասնակցելուց հրաժարվելը, թշնամուն դիմադրելուց հրաժարվելը, առանց դիմադրության գերի հանձնվելը, պետի հանդեպ բռնի ուժ գործադրելը, պետի հրամանների ու կարգադրությունների իրագործմանը խանգարելը, հրամանատարության դեմ բացարձակ ապստամբությունը կամ դրան գրգռելը, զինվորական պահակախմբի, պահակի վրա հարձակվելը, նրանց զենքով դիմադրելը և դիտավորյալ սպանությունը, խաբեության, անդամահատության կամ այլ միջոցներով զինվորական ծառայությունից խուսափելը, դասալքությունը, ռազմական գույքը դիտավորյալ ոչնչացնելը, փչացնելը, հափշտակելը և այլն:

Վերոհիշյալ օրենքով առաջին անգամ օրենսդրական ճանապարհով քրեական պատժատեսակ սահմանվեց մահապատիժը, որը և հետագայում այդպիսի նախաձեռնությունների պարբերաբար ծավալման նախադեպ հանդիսացավ: Մահապատի խնդիրը շոշափվեց նաև 1920 թ., երբ մայիսյան իրադարձությունների կապակցությամբ կառավարությունը մայիսի 8-ին ընդունեց «Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին ժամանակավոր օրենքը»<sup>49</sup>: Օրենքը, բացի արտակարգ դատարանի հիմնադրումից, սահմանում էր նաև արտակարգ մարմինների քննությանը ենթակա և ընդդատյա հանցագործությունների շրջանակը, տալիս էր այդ հանցավոր արարքների հանցակազմերի հատկանիշները, նախատեսում պատժամիջոցները: Պատժական քաղաքականության տեսակետից նորանվազություններից մեկն էլ այն էր, որ որոշակի քրեաիրավական արարքներ, որոնց համար 1919 թ. հուլիսի 24-ի օրենքով, բացի այլ պատիժներից, նախատեսվում էր նաև մահապատիժ, այս օրենքով պատժվում էին միայն մահապատժով: Այդ արարքներն էին պետական դավաճանությունը, «գոյություն ունեցող իշխանությունների դեմ ակնհայտ ապստամբությանը մասնակցելը», զինվորականներին հրապարակային ձևով իրենց պարտականությունները չկատարելուն դրդելը, հեռագրաթելը կամ երկաթուղին դիտավորյալ ոչնչացնելը կամ փչացնելը: Ընդ որում, օրենսդիր լիազորություններով օժտված կառավարությունն այս առիթով ձեռնարկեց աղաղակող հակաիրավական և հակաօրինական քայլ. մայիսի 8-ի ժամանակավոր օրենքին՝ որպես քրեական պատասխանատվությունը խստացնող կամ նոր հանրորեն վտանգավոր արարքների պատժելիությունը սահմանող օրենքի, տալով հետադարձ ուժ: Ժամանակավոր օրենքի 19 հոդվածը սահմանում էր, որ այդ օրենքն ուժի մեջ է մտնում ընդունման օրից, այսինքն՝ մայիսի 8-ից: Սակայն 1920 թ. մայիսի 17-ի օրենքով այդ հոդվածը փոփոխության ենթարկվեց և սահմանվեց, որ «ներկա օրենքին ենթակա են սույն օրենքում նախատեսված գործողությունները, որոնք տեղի են ունեցել ապրիլի 15-ից հետո»: Նշենք նաև, որ «օրենքը հետադարձ ուժ չունի» իրավական սկզբունքը սահմանված էր Առաջին հանրապետությունում գործող օրենսդրությամբ:

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 69, թ. 126:

Հաջորդ քայլը, որն ուղղված էր մահապատժի կիրառման շրջանակների ընդլայնմանը, արվեց «Պետական դրամանիշեր կեղծելու դեմ պատիժների սահմանելու մասին» օրենքով՝ ընդունված 1920 թ. օգոստոսի 20-ին<sup>50</sup>: Այդ օրենքով, որպես քրեական պատժատեսակ, միայն մահապատիժ էր սահմանվում, օրինակ՝ պետական դրամանիշերի թուղթը և նկարներն արհեստական միջոցներով կեղծելու, նմանապես և դրամանիշերի իսկական արժեքը բարձրացնելու համար, դրամանիշեր կեղծելու տպագրության գործիքներ, նյութեր մատակարարելու համար, «արտասահմանից կեղծ թղթեր ներմուծելու» և նման բնույթի մի շարք այլ հանցագործությունների համար: Ընդ որում, այդ գործերը հանձնվում էին մայիսին հիմնադրված արտակարգ դատարանների ընդդատությանը:

Ավելի ուշ արդարադատության նախարարությունն անհրաժեշտ գտավ պաշտոնական հանցագործությունների դեմ ևս ձեռնարկել արմատական միջոցներ: Մասնավորապես՝ պաշտոնական հանցագործությունների համար պատիժների խստացմամբ ու ժամանակավորապես մահապատժի կիրառմամբ, և երկրորդ՝ այդ բնույթի քրեական գործերն արտակարգ դատարանների ենթակայությանն ու ընդդատությանը հանձնելով: Այդ նկատառումներն իրականացվեցին 1920 թ. հոկտեմբերի 2-ին կառավարության կողմից հաստատված «Պաշտոնական հանցագործությունների մասին ժամանակավոր օրենքով»<sup>51</sup>: Ի տարբերություն մայիսի 8-ի ժամանակավոր օրենքի՝ այս օրենքում մահապատիժ սահմանող հոդվածների սանկցիաները շարադրված էին այլընտրանքային եղանակով, օրինակ՝ «Չորս տարվա տաժանակիր աշխատանքից մինչև մահվան պատիժ»: Օրենքում թվարկված հանցակազմերից էին՝ կաշառակերությունը, կորզումը, իշխանության չարաշահումները շահադիտական նկատառումներով, իշխանության սահմանազանցումները՝ կատարված անփութությամբ, շահադիտական նպատակով, գոյություն ունեցող պետական կարգը տապալելու ձգտումով և այլն, ինչպես նաև պաշտոնական անգործությունն ու ինքնական կերպով պաշտոնից հեռանալը:

Նախարարների խորհրդի կողմից 1920 թ. նոյեմբերի 23-ին հաստատված օրենքով «Պետական հանցագործությունների մասին ժամանակավոր օրենքի» գործողությունը քրեաիրավական առումով տարածվեց նաև զինծառայողների վրա, իսկ դատավարական առումով այդ գործերն ընդդատյա էին ռազմական դատարաններին<sup>52</sup>: Այսինքն՝ այդ բնույթի զինվորապաշտոնական հանցագործությունների համար ևս սահմանվում էր մահապատիժ: Կառավարությունը 1920 թ. հոկտեմբերի 2-ին ընդունել է նաև մեկ այլ օրենք, որը Նախարարների խորհրդի նիստերի համառոտ արձանագրության մեջ ձևակերպված է այսպես. «Արտոնել դասալիքների մահապատիժը գործադրելու նաև կախաղանով, որը կարող է լինել և հրապարակային»<sup>53</sup>: Այդ օրենսդրական միջոցառման օգնությամբ կա-

<sup>50</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 198, ց. 1, գ. 58, թ. 114:

<sup>51</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 199, ց. 1, գ. 162, 2-րդ մաս, թ. 336:

<sup>52</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 329:

<sup>53</sup> Նույն տեղում, գ. 118, 2-րդ մաս, թ. 218:

ռավարությունը ցանկանում էր մեծացնել պատժի ընդհանուր կանխման գործառույթը<sup>54</sup>:

Այսպիսով, Առաջին հանրապետության հռչակման պահին մահապատիժը, որպես քրեական պատժատեսակ, պատիժների համակարգում չէր սահմանված: Հանրապետության նոր ձևավորված օրենսդիր և բարձրագույն գործադիր մարմինները սկզբնական շրջանում հավատարիմ մնացին այդպիսի պատժական քաղաքականությանը: Սակայն հանրապետությունում ստեղծված բարդ կացությունը և քրեածին գործոնների ծավալումն ու հանցավորության մակարդակի աճը պայմանավորեցին մարդասիրական դիրքորոշման փոփոխությունը, և հանրապետությունում օրենսդրական ճանապարհով ներմուծվեց մահապատիժ: Պատժական քաղաքականության ընթացքում դրսևորվող միտումներից էին. 1) մահապատժի ներմուծման կամ սահմանման բոլոր օրենսդրական որոշումների կայացում կառավարության կողմից այն ժամանակահատվածներում, երբ նա օժտված էր օրենսդրական լիազորություններով, 2) հանրապետության գոյությանը զուգընթաց՝ մահապատժով պատժվող հանցավոր արարքների շրջանակի ընդլայնում նախ զինվորական, պետական հանցագործությունների համար, իսկ այնուհետև պաշտոնեական և այլ հանցագործությունների համար, 3) մահապատժի կատարման ձևերի խստացում գնդակահարությունից մինչև հրապարակային կախաղան:

Այդպիսի օրենսդրական նորամուծությունների հիմնական նպատակը պատժի ընդհանուր կանխման գործառույթի ուժեղացումն էր: Սակայն այդ նորամուծությունները հիմնականում չէին հասնում իրենց նպատակներին: Օրինակ, չնայած մահապատժով պատժվող զինվորական հանցագործությունների լայն շրջանակին, հայկական բանակում դասալքությունը տարածված երևույթ էր, իսկ 1920 թ. աշնանը թուրքերի հետ պատերազմում զորքն իրեն դրսևորեց շատ անկարգապահ, զրեթե չկռվեց: Նույն եզրահանգումը կարող ենք անել նաև պետական և պաշտոնեական հանցագործությունների վերաբերյալ: Հետևաբար, պատժական քաղաքականության մեջ պատժի նպատակների իրացման համար ավելի արդյունավետ է ոչ այնքան քրեական պատժի խստությունը, որքան նրա անխուսափելիությունը: Կարծում ենք, որ Առաջին հանրապետությունում մահապատժի՝ որպես քրեական պատժատեսակի սահմանման և կիրառման ընդհանուր պատկերը, օրենսդիր մարմինների ձեռնարկած քայլերի վերլուծությունը, վերհանված միտումները, վերջապես դարավոր պատմական փոր-

<sup>54</sup> Այդ կախաղաններն իսկապես կառուցվել են, և դրանց կառուցումը տեղիք էր տվել հասարակայնության մեջ բազմաթիվ անհիմն ու խուճապային խոսակցությունների տարածմանը, որոնց վերջ տալու և հերքելու համար ռազմական նախարարությունը «Յառաջ» թերթի 1920 թ. հոկտեմբերի 10-ի համարում հանդես է եկել հատուկ հայտարարությամբ. «*Երևանի հրապարակում կախաղանի կառուցման շուրջ ստեղծվել և արագ կերպով տարածվում են մի շարք լուրեր, որոնք ոչ միայն հիմք չունեն, այլ նաև հակապետական, պրովոկացիոն բնույթ են կրում, օրինակ, որպես թե կախաղանը կառուցված է կախ տալու համար երկու սպանների և երեք թուրքերի, որոնց նպատակն է եղել պայթեցնել Քանաքեռի հրանոթային պահեստը: Նկատի ունենալով, որ այդ լուրերը չեն համապատասխանում իրականությանը, ռազմական նախարարի հրամանով հայտարարում են հասարակայնությանը, որ նման լուրեր տարածելու հանցանքի մեջ բռնվողներն անմիջապես կձերբակալվեն և կհանձնվեն ռազմադաշտային դատարանին, դատապարտելու որպես հակապետական հանցավորներ»:*

ծը, որ մահապատիժը չի սանձում հանցագործներին և չի վերացնում հանցավորությունը, լուրջ փաստարկներ են հոգուտ մահապատիժ՝ որպես քրեական պատժատեսակի վերացման:

Օրենսդիր և գործադիր մարմիններն իրենց արտակարգ նախաձեռնություններով ներխուժում էին արդարադատության իրականացման ուղիով նաև արտակարգ դատարանների հիմնադրմամբ, որոնցում ոչ միայն բացակայում էին դատավարական երաշխիքները, այլև դրանք անմիջապես և ուղղակիորեն ղեկավարվում էին կառավարության կողմից՝ դատելու կամ չդատելու, մահապատիժ նշանակելու կամ չնշանակելու հարցերով հրահանգներ ստանալով: Այդ դատարանները նույնիսկ ձևականորեն չէին մտնում արդարադատության նախարարության համակարգի մեջ, նրանցում չէր գործում դատավորի անկախության երաշխիք հանդիսացող անփոփոխելիության սկզբունքը: Արդարադատության ոլորտում իրականացված արտակարգ միջոցառումներից էին նաև դատարանների անկախության սկզբունքի խախտումները, դատավորների անփոփոխելիության սկզբունքի իսպառ վերացումը, դատական քննության անմիջականության սկզբունքի մասնակի վերացումը<sup>55</sup>:

Առաջին հանրապետության բոլոր առումներով արտակարգ իրադրությունը, ազգային և պետական անվտանգությանը սպառնացող ամեն տեսակի վտանգները՝ համաճարակային հիվանդություններից սկսած մինչև ներքին հակապետական խռովությունները, քաղաքական, տնտեսական, սոցիալական ծանր կացությունը, պատերազմները, խռովություններն ու հանցավորության բարձր մակարդակը, պետական մարմինների «պատշաճ» համակարգի անարդյունավետ գործունեությունը ստիպում էին իշխանություններին դիմելու երկրի կառավարման արտակարգ միջոցառումների կենսագործմանը և՛ օրենսդրական ճանապարհով, և՛ օրենքի հիման վրա կառավարության ձեռնարկած արտակարգ միջոցառումներով: Այդպիսի արտակարգ միջոցառումների կենսագործման ձևերն էին՝ տեղական արտակարգ կառավարման համակարգի սահմանումը, ուժեղացված դրության հայտարարումը, արտակարգ կոմիսարների ինստիտուտը, խոսքի ազատության սահմանափակման միջոցառումների կիրառումը, գործադիր իշխանության մարմինների կողմից «պարտադիր որոշումների» ընդունումը, ապրանքների և մթերքների ազատ շրջանառության սահմանափակումը, մահապատիժ՝ որպես քրեական պատժատեսակի ներմուծումը: Այդ ընթացքում էականորեն խախտվում կամ սահմանափակվում էին մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները<sup>56</sup>:

<sup>55</sup> Այդ մասին մանրամասն տես **Ա. Գ. Վաղարշյան**, Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգը (1918-1920 թթ.), Եր., 2006:

<sup>56</sup> Օրինակ՝ «Հայրենիքի փրկության կառավարության» ձեռնարկած արտակարգ միջոցառումներից էր նաև, այսպես կոչված, «տպարանների գրավումը»: Որպեսզի կանխվի հակակառավարական թուրքիկների և գրականության տպագրությունը և տարածումը, կառավարությունը 1920 թ. մայիսի 6-ին կայացրեց որոշում՝ «Տպարանների գրավման, անոնց վրա դրվելիք հսկողության և օգտագործման խնդիրների գործողությունը» դնել ներքին գործերի նախարարի հայեցողության տակ (տես ԳՂ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 80): Խոսքի և մամուլի ազատության իրավունքի դեմ ուղղված հաջորդ արտակարգ միջոցառումը կիրառվեց 1920 թ. սեպտեմբերի 17-ին, երբ ներքին գործերի նախարարությանը հանձնարարվեց «միջոցներ ձեռք առնել «Նոր խոսք» թերթի մուտքը Հայաստան արգելելու» (տես ԳՂ ԱԱ, ֆ. 199, ց. 2, գ. 118, 2-րդ մաս, թ. 207):

Ազգային անվտանգության բոլոր տեսակի սպառնալիքները ստիպում էին իշխանություններին փոխել իրենց սկզբնական ժողովրդավարական դիրքորոշումները, դիմել տարբեր տեսակի արտակարգ մարմինների հիմնադրմանը, խախտել, վերանայել կամ վերացնել պետական կառավարման և իրավական հանընդհանուր ճանաչում գտած հիմնարար սկզբունքները: Այդպիսի գործելակերպը հաճախ ուներ նաև քաղաքական պատճառներ, պայմանավորված էր կառավարող կուսակցության մենատիրական ձգտումներով, հետևանք էր նաև իրավական մշակույթի ցածր մակարդակի: Նման ուղղվածություն ունեցող օրենսդրական նախաձեռնություններ արվում էին հանրապետության գոյության ողջ ժամանակաընթացքում, սակայն Հայաստանի խորհրդի և խորհրդարանի ողջամիտ դիրքորոշման հետևանքով հետագա ընթացք չէին ստանում: Այլ էր վիճակը այն ժամանակաշրջաններում, երբ օրենսդրական լիազորությունները պատկանում էին կառավարությանը, հատկապես «բյուրո կառավարությանը», երբ «արտակարգ» օրենսդրական նախաձեռնություններն անարգել իրագործվում էին: Իրավական հիմնարար սկզբունքների բոլոր վերանայումները, արտակարգ գործադիր կառավարման և դատարանների հիմնադրումն արվել են հիմնականում այս ժամանակահատվածներում: Գործադիր իշխանությունը հակված էր ամեն ինչ անել ու կառավարել արտակարգ միջոցների ձեռնարկմամբ: Դրան հակառակ՝ խորհրդարանները ձգտում էին զսպել կառավարության այդ անհագուրդ ցանկությունը: Այդ են վկայում կառավարության ձեռնարկած մի շարք արտակարգ միջոցառումների չվավերացվելն օրենսդիրի կողմից, պատգամավորների՝ գործադիրին ներկայացրած հարցումների ու հարցապնդումների բնույթը, երկու խորհրդարանների ու օրենսդրական լիազորություններով օժտված կառավարությունների ընդունած օրենքների համեմատությունը<sup>57</sup>: Կառավարության և խորհրդարանի նման փոխհարաբերությունների հետաքրքիր, քաղաքական-կուսակցականացված բացատրություն է տալիս դաշնակցական մանուլը. «Կառավարությունը կազմված էր կոալիցիոն սկզբունքով, դրա շնորհիվ նա անվերջ ներքին պայքար էր մղում: Խորհրդում էլ, չունենալով մեծամասնություն, շատ դեպքերում, երբ հարկավոր էր կտրուկ լինել, տատանվող քաղաքականություն էր վարում: Կառավարությունը կաշկանդված էր անվերջ հարցերով ու հարցապնդումներով: Այդ կողմից առաջնությունը սոցիալ-դեմոկրատներին պետք է տալ. նրանք ամեն մի առիթից օգտվում էին և խոչընդոտում կառավարությանը: Պարզ էր, որ այս պայմաններում նորմալ օրենսդրական ու շինարարական աշխատանք կատա-

<sup>57</sup> Ստեղծված իրավիճակում երբեմն նաև խորհրդարանը չէր դիմանում զայթակողությանը և դիմում էր արտակարգ միջոցառումների: 1918 թ. օգոստոսի 21-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց օրենք «Խուլերայի դեմ կռվելու մասին» (տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1918, հոդվ. 3, էջ 1-2): Այդ օրենքը Հայաստանի ամբողջ տարածքում հայտարարում էր խուլերայի բարձր վտանգավորություն և, որպես արտակարգ օրենսդրական միջոցառում, սահմանում էր, որ Հայաստանի խորհրդի բժշկասանիտարական մասնաժողովը համարվում է վարակիչ համաճարակային հիվանդությունների դեմ պայքարող բոլոր մարմինների ու հիմնարկությունների վրա «հսկող ամենաբարձր մարմին»: Այսինքն՝ խորհրդարանական հանձնաժողովին վերապահվում էին հսկողական գործադիր գործառույթներ:

րել անհնար էր: Հարկավոր էր դրությունը փրկել»<sup>58</sup>: Այսպիսով, սովորական պայմաններում, երբ գործում էին խորհրդարանները, կառավարությունն արտակարգ միջոցառումների դիմելու հարցում ավելի զուսպ էր, քանի որ խորհրդարանում դրանք անցկացնելը հանդիպում էր դժվարությունների՝ շնորհիվ խորհրդարանական նիստերի հրապարակայնության, հասարակական դժգոհությունների և աղմուկի: Այնինչ, երբ օրենսդրական իրավունքներ էր ձեռք բերում կառավարությունը, ընդունված օրենքներն աչքի էին ընկնում իրենց արտակարգությամբ: Այս հարցում զսպիչ գործոն էր նաև 1918 թ. նոյեմբերից մինչև 1919 թ. հունիսը գործած կռալիցիոն կառավարությունը, որի ժողովրդական նախարարները շատ դեպքերում դիմադրում էին արտակարգ միջոցառումների կիրառմանը:

Հայաստանի Հանրապետության օրենսդիր և գործադիր պետական մարմինները հանրապետության հռչակման պահից իրենց առաջնային խնդիրներից մեկը համարեցին հիմնել հանրապետական կառավարման ձև և հաստատել ժողովրդավարական վարչակարգ: Հանրապետության օրենսդիր մարմինները, կառավարությունը սկզբնական շրջանում, ինչպես ամբողջ պետական կառավարման, այնպես էլ արդարադատության ոլորտում կենսագործում էին այդ խնդիրը՝ ամեն կերպ խուսափելով արտակարգ մարմիններից և կառավարման ձևերից, ջանալով նորաստեղծ հանրապետությունում պետական կառուցակարգը դնել իրավական, ժողովրդավարական հիմքերի վրա: Սակայն հանրապետության քաղաքական, տնտեսական, սոցիալական ծանր կացությունը, պատերազմները, հակապետական խռովություններն ու հանցագործությունների մեծ քանակը, ազգամիջյան թշնամանքը, ներքին քաղաքականության, պետական և դատական շինարարության մեջ թույլ տրված սխալներն ու մոլորությունները նրա գոյության ողջ ժամանակաշրջանում իրադրությունը դարձնում էին անկառավարելի, վտանգավոր ու սպառնալից, որն էլ ստիպում էր իշխանություններին դիմելու արտակարգ մարմինների ու կառավարման ձևերի օգնությանը: Արտակարգ այդ քայլերը, բացի հակաժողովրդավարական լինելուց, հաճախ անարդյունավետ, իրավական-կազմակերպական տեսակետից լավագույն կերպով չմտածված փորձեր էին, որովհետև դրանք ևս չէին հանգեցնում հանրապետությունում օրինականության և իրավակարգի հաստատման, պետական կառավարման նպատակների արագ, պատշաճ և իրավական կենսագործմանը: Հայաստանի Հանրապետությունն իր կառավարման ձևով հանրապետություն էր, սակայն ոչ իրավական պետություն, որովհետև օրենսդիր մարմիններն ունեին անսահմանափակ իրավաստեղծագործական հնարավորություններ: Այդպիսի իրավահասկացողությունը և գործելակերպը հայրենասիրական բռնապետության նպատակահարմարության տեսանկյունից ևս հիմքեր չկան արդարացնելու, որովհետև ազգային-պետական ուժեղ իշխանություն չի նշանակում ապօրինություն:

---

<sup>58</sup> «Պառլամենտական կյանքը 1919 թ.», «Յառաջ», թերթ, Եր., 1920, հունվար, թիվ 3:

**АРТУР ВАГАРШЯН – *Чрезвычайное законодательство и чрезвычайные формы правления в Первой Республике Армения.*** – С момента провозглашения независимости законодательные и исполнительные органы считали первостепенной задачей установить в Армении республиканское правление, не прибегая к чрезвычайным средствам. Однако царившая в стране чрезвычайная ситуация, угрозы национальной безопасности, неэффективность ординарной системы госуправления принуждали власть обращаться к экстраординарным мерам. К ним относились усиленное положение, институт чрезвычайных комиссаров, ограничение свободы прессы и свободного оборота товаров, введение смертной казни как уголовного наказания и т. д. Такой стиль деятельности был обусловлен и политическими причинами, в частности, желанием правящей партии монополизировать власть. Однако при функционирующем парламенте этот процесс затихал, поскольку парламентский контроль ограничивал тягу исполнительной власти к чрезвычайным средствам. Когда же правительство получало законодательные полномочия, почти все предложения по экстраординарным формам правления беспрепятственно реализовывались, несмотря на их неэффективность.

**ARTUR VAGHARSHYAN – *The Emergency Legislation and Forms of Emergency Administration in the First Republic of Armenia.*** – Since the date of the Armenian First Republic proclamation the legislative and executive bodies had defined, as their primary task, to establish a republican form of governance, trying to avoid any emergency body and administrative form, and trying to put the newly created state mechanism on legal and democratic basis. However, the emergency situation, all kinds of threats to national and state security, the inefficient activity of the “due” system of the state bodies, in all aspects, were forcing the authorities to turn to emergency measures in governing: establishment of emergency local governing system, proclamation of enhanced situation, the institute of emergency Commissaries, measures restricting freedom of speech, the “obligatory decisions” of the executive power bodies, the restriction of goods ‘and products’ free circulation, the establishment of death penalty as a criminal punishment, etc. Such practice often had also political reasons: it was connected with the monopolistic desire of the ruling party and was a result of the low level of legal culture. The emergency legislative initiatives were being made throughout all the period of the Republic’s existence. When there was the Parliament, the Government was more modest while turning to emergency measures, as, due to the mechanism of parliamentary supervision, the Parliament was able to restrict the Government’s endless desire to do and manage everything with emergency measures. The situation was different, when the Government owned legislative capacities, and the “extraordinary” legislative initiatives were carried out without hindrance. Legislative bodies had unlimited opportunities during law-creating. The emergency administrative forms were often ineffective, thoughtless attempts in legal-organizational perspective, as they also did not lead to the establishment of legality and legal order, to the rapid, appropriate and legal realization of state governmental goals.